խիղճ պաշտօնեաները, բայց, ա՛յն ժամանակւայ պայմաններում, մասամբ միայն յաջողութիւն ունեցաւ:

Պետական օր աւուր աճող ծախսերը կառավարութիւնը հոգում էր թղթադրամներով. տպագրական մեքենան գործում էր կանոնաւոր և արագ. ամսական տպւում էր 6—800 միլիոն րուբլի: Մինչև օգոստոս արդէն բաց էր թողնւած երկու միլիարդ րուբլու հայկական չէկ: Լոնդոնում պատրաստւում էին հայկական դրամանիշներ: Շրջանառութեան մէջ էին և անդրկովկասեան բոնները:

Բնականաբար, դրամական այս հեղեղը մեծ չափով անդրադառնում էր և երկրի առևտրա–արդիւնաբերական վիճակի և ապրուստի սղութեան վրա: Մթերքների գները բարձրանում էին խելայեղ արագութեամբ:

Կառավարութիւնը դրա դէմ պայքարում էր առևտրա–արդիւնաբերական կեանքի կազմակերպումով, ոսկու հիմնադրամի ստեղծումով, կօօպերացիան քաջալերելով, մաքսերի ու հարկերի յաւելումով և փոխառութեան միջոցով: Առևտրա–արդիւնաբերութեան գործերը կարգաւորում էր ելևմտական նախարարի օգնական՝ յայտնի դրամատէր և հասարակական գործիչ Հ. Մելիքեանը, ապա՝ Մ. Շաթիրեանը: Արտաքին առևտուրը ղեկավարում էր Ապրանքափոխութեան կոմիտէի միջոցով: Փետր. 8–ից Երևանում սկսեց գործել և Հայաստանի Առևտրա–Արդիւնաբերական Պալատը, որի նպատակն էր՝ գործել տալ երկրի առևտրա–արդիւնաբերական գործին և օտար երկրների համապատասխան պալատների միջոցով կապ ստեղծել արտասահմանի շուկաների հետ: Պալատի նախագահն էր Երևանցի յայտնի առևտրական և հասարակական գործիչ Ց. Մելիքեանը:

Հարկային գործի ասպարէզում պէտք է արձանագրել յառաջատուական տուրքի սահմանումը յունիս 15–ին: 1920թ. ընթացքում մտցւում էր յառաջատուական տուրք. տարեկան մինչև 18,000ր. հասոյթ ունեցողները ազատւում էին տուրքից: 18,000 րուբլուց աւելի հասոյթները ենթարկւում էին տուրքերի՝ հետևեալ համեմատութեամբ. 18,000–ից մինչև 19,000ր. հասոյթ ունեցողը պիտի վճարէր 206ր., 28,000ից մինչև 29,000ր. ունեցողը՝ 556ր., 38,000–ից մինչև 40,000ր. ունեցողը՝ 1000ր., 58,000–ից մինչև 60,000ր. ունեցողը՝ 6,600ր., 100,000–ից մինչև 110,000ր. ունեցողը՝ 22,550ր., 200,000–ից մինչև 210,000ր. ունեցողը՝ 56,550ր., 300,000–ից մինչև 310,000ր. ունեցողը՝ 94,550ր., 390,000–ից մինչև 400,000ր. ունեցողը՝ 140,000ր., 400,000–ից աւելի հասոյթ ունեցողներից իւրաքանչիւր 10,000 րուբլուց պէտք է դանձւէր 6,100 րուբլի:

Այս թւերից երևում է այն սկզբունքը, որը հիմք էր դրւած Հայաստանի հարկային քաղաքականութեան. ինչքան քաղաքացու հասոյթը աւելանում էր, այնքան պետութեան ստացած տոկոսը պիտի բարձրանար: Մի սկզբունք, որի համար պայքար են մղում դեռ ժամանակակից ռամկավարութեան առաջաւոր չարքերը: